

ՊԱՅՄԱՆՔ

արեւմտեան զին և Պոլսոյ հմր 8 ՄԼՃ.
» Գաւառաց 10 ՄԼՃ.
Վեցամեայ և Պոլսոյ 4 ՄԼՃ.
» Գաւառաց 5 ՄԼՃ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրյ.
Յանուարի ամիսը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար դատ սակարկութիւն կը լլայ:



ԼՐԱԳԻՒՐ

ՔԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 4 ՄԱՅԻՍ

ՔԱՆԱԿԱՆ

Գաղղիոյ ազգային ժողովը երեք-
շաբթի օրը բացուեցաւ, բայց դեռ
վիճարանութեանց սկզբնաւորութիւնն
չեղաւ: Սակայն եկած լուրերէն կը
հասկցուի թէ՛ Օրինաւորական ըս-
ուած կուսակցութիւնն առջի օրէն
սկսել է կառավարութեան առաջար-
կելիք սահմանադրական օրինաց դէմ
մարտաւարութիւնը ցուց-
նել:

Պ. Տը Պրօքի կանխաւ դիտելը զայս,
ուստի, իբրեւ ճարտարապետ, զէմն
եղեւ իր զգուշացման զգուշացման
ազատութեամբ համար ժամանակ վառար-
կելու պէտքն զգալով, սահմանադ-
րական օրէնքներն անմիջապէս առա-
ջարկելու դիտարկութիւնէն ետ կե-
ցել, և բնորոշական օրէնքը նախ
առաջարկել որոշել է:

Այս որոշման ներքեւ ուրիշ խոր-
հուրդ մը ծածկուած է, այն է՝ ազ-
գային ժողովն ի հարկին լուծել տա-
լու խորհուրդը. ծանր՝ և կրնայ իսկ
ըսուիլ՝ յանդուգն խորհուրդ, որ կըր-
նայ մեծ փոթորիկ յարուցանել, և
փոխանակ ժողովին՝ Պ. Տը Պրօքի տա-
պալմանը վերջնաւ:

Հեռագիրն անցնել շաբթու Պէլ-
ճիոյ Լնտէրանտանն լրագրին մէկ կա-
րեւոր հրատարակութիւնը յիշած էր,
որոյ մէջ 1870ին իրուսո—Գաղղիական
պատերազմին ծագմանը վրայ մինչեւ
ցարդ ծածուկ մնացած իրողութիւն-
ներ յայտնուած են կրէր:

Լնտէրանտանն այն թերթը, որ
մայիս 6 թիւն ունի, ստացանք այս
շաբթու, և հետաքրքրութեամբ
կարդացինք նշանակեալ յօդուածը:
Նաբօլէոնեան կայսրութիւնը, որ
վերջին պատերազմին պատասխանա-
տուութիւնն իր վրայէն նետելու կաշ-
խատել մինչև հիմա, այս յայտնու-
թեանց հրատարակութիւնէն ետև փա-
խուստի դուռ չունի բնաւ:

Լնտէրանտանն լրագրը կընէ թէ
թէ իր հրատարակած գրութեան վա-
ւերականութեանը լիովին կերպնա-
ւորէ. ուստի տարակոյս չմնար որ
Նաբօլէոնեան կայսրութեան վերջին
օրերու նախարարներուն մէկուն գըր-
չէն ելած է, Պ. Լ. միլ Օլիվիէի կամ Պ.
Տը կրամօնի, բայց առաւել առաջ-
նայն, որովհետև ոճն առաւել անոր
ոճին նմանութիւն ունի:

Ահաւասիկ յիշեալ հրատարակու-
թեան կարեւոր մասերուն թարգմա-
նութիւնը:

ՊԱՅՄԱՆՔ Ե.Չ ՄԼ

1870 յուլիս 3ին Օրէնդրական
ժողովը անդամ Պ. Քոչէրի իբրեւ
թագաւորական ազգատնային իշխա-

նի մը Սպանիական դաշուն ընտրելի
ըլլալու հաւանականութեան վրայ կա-
ռավարութեան հարցում ընելով,
կառավարութիւնը խորհեցաւ որ այս
հարցումն անդադարեալ չէր կըր-
նար թողուիլ: Եւ սակայն մեծ դժ-
ւարութեան մէջ էր:

Պ. Քոչէրիի հարցումն Օրէնդրա-
րական ժողովին ներկայանալէ ետև՝
կառավարութեան նախարար Սէն-
ֆրուի պալատն ի խորհուրդ գումա-
րեցան կայսեր նախագահութեան
ներքեւ. բայց որոշում մը չեղաւ: Նա-
խարարը՝ առանց բացառութեան՝
ամենն ալ խաղաղութեան կողմնակից
էին և անմիջական դժուարութեան վը-
տանդ մը չէին նախատեսել իսկ կայս-
րին՝ ամեն ժամանակէ աւելի լուռ
էր, և մեծ մտահոգութիւն ունէր ի-
րաց վիճակին վրայ: Սպանիական
զէպըն երեւան եղեւ ի վեր՝ եր-
կու հոգ ունէր. մէկ կողմէ արա-
քին վիճակը, միւս կողմէն ներքին
վիճակը: Յուլիս 3ին իրիկունէն սկըս-
եալ երկու յայտնեց թէ ժողովին
ընդդիմադիր մասն այս առիթը
ձեռք առնելով մեծ դժուարութիւն-
ներ չհանէ իր դէմ. ուստի բռնուե-
լիք ընթացքին վրայ այնպիսի խոր-
հուրդներ տուաւ նախարարաց, որք
խաղաղութիւնն անմիջապէս պահելու
փախալին վրայ բնաւ կասկած չէին
թողուր:

Յուլիս 3ին Պէրլինէն ու Մատրի-
տէն ստացուած տեղեկութիւններն
անբաւական ըլլալով, որոշուեցաւ որ
իրիկունն ճաշէն ետքը նորէն գում-
արին:

Երկրորդ գումարման ժամանակ
կայսեր զգուշացման փոխուած չէր:
Խորհրդակցութեանէ ետև որոշուե-
ցաւ որ Պ. Օլիվիէ և Պ. Տը կրամօն
յայտարարութեան ծրագրեր մը չա-
րագրեն, և հետեւեալ առաւօտուն
նախարարաց խորհրդին ներկայացը-
նեն:

Մինչեւ նախարարաց խորհուր-
դը յուլիս 3ին իրիկունը կայսեր նա-
խագահութեամբ գումարուած էր,
Պ. Քէրոմ Տալիտ երկու խօսակցու-
թիւն մ'ըրաւ կայսրուհւոյն հետ:
Կայսրուհին, առանց կայսեր լին
մտահոգութեան մասնակցելու, ընդ-
հակառակն՝ յուլիս 3ին իրիկունէն ի
վեր սաստիկ գրգռեալ էր: Յաճախ
կը տեսակցէր իրեն ընտանի անձանց
հետ, և խօսքներն ալ խիստ պատե-
րազմայնայն էին:

Երբոր կայսրը մինակ մնաց, կայս-
րուհին քովը գնաց, և երկու խօ-
սակցութիւն մ'ըրին, որ մինչև կէս
դիշերէն մէկ ժամ ետքը տեւեց, և
որոյ մէկ մասին ներկայ գտնուեցաւ
Պ. Քէրոմ Տալիտ առջև:

Հետեւեալ առաւօտուն նախա-
րարը նորէն ի խորհուրդ գումարե-
ցան Սէն-ֆրուի պալատը, և մեծ

եղաւ զարմանքն իր երբոր մէկէն ի
մէկ տեսան որ կայսեր զգուշացման
լորովին փոխուած էր:

Պ. Լ. Օլիվիէ և Պ. Տը կրամօն՝ Պ.
Քոչէրիի հարցման պատասխանող յայ-
տարարութեան ծրագրեր մը պատ-
րաստած ըլլալով՝ կարգացին կայսեր
և միւս նախարարաց:

Ահաւասիկ յիշեալ ծրագրին պատ-
ճէնը:

«Մայր է որ իբրեւ մարաշխան
Սպանիոյ թագը Հոսէ Կարլոսին Լեո-
բալտ իշխանին առաջարկել է և նա
ալ ընդունել է:

«Բայց Սպանիոյ ժողովուրդը դեռ
իր կարծիքը յայտնած չէ, և մեք
դեռ չենք իմացած այդ բանակցու-
թեան ճիշդ պարագաները՝ որովհե-
տև մեզնէ ծածուկ պահուած էր:

«Ուստի այս խնդրոյն վրայ այսօր
վիճարանութիւն բանալը դործնա-
կան արդիւնք մը չկրնար ունենալ:
Կաղաչենք տեսարք որ ետ ձգէք:

«Մեք չենք դադարած մեր հա-
մախքութիւնը ցուցնել Սպանիական
ազգին, և միշտ զգուշացած ենք այն
ամեն բաներէն՝ որք իր վեհապետու-
թիւնը լիովին դործածող մեծ և ազ-
նիւ ազգի մը ներքին դործերուն
խառնուելու երեւոյթ կրնան ունե-
նալ:

«Պիտի յարատեւենք մեր այս ըն-
թացքին մէջ, բայց կը յուսանք որ
գերմանական ազգին խնամտութիւնն
և Սպանիոյ բարեկամութիւնը կ'մեր-
ժեն այդ խորհուրդը, որ Եւրոպա-
կան հաւասարակշռութիւնն ի քննա-
մեր շահուն աւերելու կը ձկտի»:

Այս ծրագրին վրայ նախարարք
անմիջապէս խորհուրդ ընելով, ա-
ռաւին, երկրորդ և երրորդ պար-
բերութիւնները խիստ թեթեւ փո-
փոխութեամբ ընդունուեցան: Իսկ
չորրորդ պարբերութեան վրայ կայս-
րը շեղմունքով վիճարանութեան
մասնակցելով իւր առաջարկութեամբ
հետեւեալ փոփոխութիւններու մէջը:

«Մեք Սպանիոյ դաշունն այլ և
այլ հետամուտներուն նկատմամբ մեր
պահած ամենաճիշդ չէզոքութենէն
դուրս չերանք և անոնցմէ ոչ մէկուն
համախորհելու կամ հակախորհելու
ցոյց չտուինք»:

Կայսեր դրից փոփոխութիւնը,
որ նախարարաց խորհրդէն առաջ
եղած խօսակցութեանց մէջ նշմար-
ւած էր, աւելի բուռն կերպիւ յայտ-
նի եղաւ այս միջոցին, և մեծ զար-
մանք պատճառեց նախարարաց:

Կարգը հինգերորդ պարբերու-
թեան գաղով, կայսրը խնդրեց որ
հետեւեալ կերպիւ գրուի:

«Պիտի յարատեւենք այս ընթաց-
քին մէջ: Բայց չենք կարծել որ դը-
րայի ժողովրդեան մը իրաւունքը
յարգելին մեզ պարտաւորէ հան-
դուրժել, որ օտար տէրութիւն մը

կարենայ Եւրոպոյ զօրութեանց պո-
մեան հաւասարակշռութիւնն ի վը-
նաս մեզ աւերել և Գաղղիոյ շահերն
ու պատիւը վտանգի մէջ դնել»:

Կայսրը բացորոշապէս յայտնեց
թէ Պ. Օլիվիէի և Պ. Տը կրամօնի ներ-
կայացուցած են աւելի կտրուկ յայ-
տարարութիւն մ'ընել պէտք էր:

Պ. Օլիվիէ նախ խօսելով յայտնեց
թէ ինք ալ կայսեր համամիտ էր:
Գաղղիոյ կառավարութեան մէկ բա-
ցորոշ և կտրուկ յայտարարութիւնը
կրնայ, ըսաւ, ապահովել խաղաղու-
թիւնը, զոր պահել կը փախալէին:
Ուստի խնդրեց միայն որ կայսեր ա-
ռաջարկած խմբագրութեան մէջ «Օ-
տար տէրութիւն մը» խօսքէն ետև
«իր ազգատնային անդամներէն մին
կարողս հինգերորդի դաշուն վրայ
դնելով» խօսքն աւելցուի:

Կայսրն ըսաւ թէ Պ. Օլիվիէի ա-
ռաջարկութիւնը կատարեալապէս կըն-
դունէր:

Միւս նախարարք ալ հետազեղե-
խօսելով, ամենն ալ խօսեմութեամբ
վարուելու խորհուրդ տուին լուրջ
փաստերով: Կայսեր առաջարկած
յայտարարութեան ողջոյն կը հաւ-
նէին, բայց առաջին խմբագրութիւ-
նը պահել լուազոյն կը համարէին,
որ արդեւ չէր ըլլար յետոյ աւելի
կտրուկ յայտարարութիւն մ'ընելու,
եթէ հարկ ըլլար: Նախարարներէն
մին խօսքը մասնաւորապէս կայսեր
ուղղելով յայտնեց թէ դեռտեղ բոր-
բոքած ըլլալով՝ կրակին հետ խա-
ղալը վտանգաւոր էր:

Կայսրն ստիպողաբար սնդեց
որ իւր առաջարկած խմբագրութիւ-
նը ընդունուի: Ասոր վրայ ամենն
ալ հաւանութիւն տուին՝ բայց ոչ ա-
ռանց երկիւղի:

Այն ժամանակ Պ. Տը կրամօն վե-
ցերորդ պարբերութիւնն առաջարկեց,
որ այս էր:

«Այսպիսի հաւանականութիւն
մը մեծ յոյս ունինք որ իրականու-
թիւն չունենար»:

Այս խմբագրութիւնը տեսակ մը
գոհութեամբ ընդունուեցաւ՝ իբրեւ
մեղմացուցիչ կայսեր առաջարկած
խմբագրութեան:

Եթեմերորդ պարբերութիւնը նա-
խարարներէն մին առաջարկեց որ
չորրորդ պարբերութեան մէջէն հան-
ւած էր, և այս էր:

«Վստահ ենք գերմանական ազ-
գին իմաստութեան և Սպանիական
ազգին բարեկամութեանը վրայ՝ որ
կը հեռացնեն այս հաւանականու-
թիւնը»:

Այս առաջարկութեան վրայ եր-
կու խորհուրդ եղաւ, և նախարա-
րաց ամենն ալ ընդունելուն: Բայց
կայսրն աւերելու կը դատէր:

Երբոր ընդունուեցաւ, կայսրն

ուժերորդ և վերջին պարբերութիւնն մ'առաջարկեց այսպէս .

«Իսկ եթէ մեր այս յայտն 'ի դերեւելէն, ձեր և ազգին պաշտպանութեամբը զօրացեալ կը կատարենք մեր պարտականութիւնն առանց վարանման և առանց տկարութեան»:

Այս վերջին առաջարկութեան վրայ վիճաբանութիւն բացուեցաւ: Նախարարներէն մէկ քանին յանդուգն գտան, առանց մտերնէն անցնելու սակայն թէ անմիջապէս պատերազմ կրնար հետեւիլ: Ամեն մարդ կը հասկնար որ այս վերջին պարբերութեան մէջ էր վտանգը. ուստի և ամենէն աւելի ատոր վրայ վիճուեցաւ: Բայց վերջապէս կայսեր բուն կերպիւս անդեղուն վրայ նախարարը հարկադրեցան ընդունիլ կայսեր առաջարկած պարբերութիւնը, որ խաղաղական լուծման առջև դուռ կը դնէր:

Պ. Լ. Օլիվիէ, որ յայտարարութեան խմբագրութիւնը կը ներկայէր հրապարակման մէջ, նորէն ծայրէ 'ի ծայր կարգաց, և նախարարը միաձայն հաւանութիւն տուին, բայց մեծագոյն մասն առանց դժ ըլլալով՝ միմիայն առ ակնածութեան: Պ. Լ. Օլիվիէ անմիջապէս օրինակ մը դրեց Պ. Տը կրամօնի տուաւ, որ Սէն-Բըրէն փարիզ տանելով Օրէնսդրական ժողովը ներկայացուց:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբեր 13 մայիս.

Թայիլ լրագիրը՝ Հոմի պաշտօնական կազմէ լրագրին ստու հանելուն հակառակ՝ կը օրէնք թէ Նիսի և Սալոնիկի ներկայումս Պիտարը իշխանին և Վիլիսի Լիմանուէլ թագաւորին մէջ եղած խռովութիւնն ստուգէ:

Վիլիսի 13 մայիս.

Աւսթրո-Օմանի պաշտպան տնօրէն խորհրդին անդամներէն ոմանք փորձը գնացին, որպէս զի սոյն օրանքան՝ մասամբ կամ ամբողջապէս՝ նոր հաստատուելիք Օմանեան ազգային պաշտպան հետ ձուլեն:

Փարիզ 13 մայիս.

Պ. Տը Պրօլի՝ եթէ նամակայ իշխանութեան տնօրէնութիւնը յետագայէն համար բանակցութեան մտած է ազգային ժողովը մասերէն ոմանք հետ:

Դեկտեմբեր 13 մայիս.

Ռուսաց Ալեքսանդր կայսրը կրախնայ հասաւ և ետանդադին համակրութեան ցոյցերով ընդունուեցաւ:

Մատրիս 13 մայիս.

Նոր նախարարութիւնը կազմուեցաւ: Պ. Չապարա խորհրդի նախագահ և զինուորական գործող նախարար, Պ. Սակասթա ներքին գործող և Պ. Իւլլա պետութեան նախարար անուանեցան:

Փարիզ 13 մայիս.

Պ. Պարթէմի Սէնթ-Լէր այս իրիկուն երկար ժամեր անցուց Պիտիլի հետ, բայց իրենց խօսակցութեան նիւթը չ'ըլլաւ իմացել:

Ազգային ժողովը լուծման գրոյցներն օր քան զօր ծանրալիւրժիւն կ'ստանան: Զախակողմեան երեսփոխանը ընդհանուր երեսփոխանական ընտրութիւն ձեռք բերելու նպատակաւ ուղերձ մը պիտի ներկայացնեն մօտ օրէն:

Վիլիսի 13 մայիս.

Սերվիլ Միլան իշխանին և Պիլիս երթալը բազում մեկնութեանց աւելի տուած է Վիլիսի լրագրաց, որոց մեծ մասը համաձայն են այս կէտիս վրայ թէ՛ այս այցելութիւնը գերիշխան պետութեան (Ք. Դրան) և անոր հարկատու իշխանութեան (Սերվիլ) մէջ կեցած կասկերն առաւել ամրապնդելու պիտի նըպաստէ: Իսկ Աւսթրիա դժ է այս այցելութեան և անկէ սպասուած արդիւնքէն:

Դեկտեմբեր 13 մայիս.

Ռուսիոյ կայսեր փառաւոր ընդունելութիւն մ'ընելու համար մեծ պատրաստութիւնը կը լինայ: Իր այցելութիւնն ալ:

խորհրդարանի խորհրդներէ բոլորովին ազատ չ'ենաւ:

Պաշտօնական ակումբներու մէջ Կ. Պօլսոյ անդադրական դեսպանին փոխախառնութեան խօսք կայ միշտ, բայց լրագրիչը գետնին մը չ'անուցին այս նիւթիս վրայ:

Պօլսոյն մէջ Օմանեան ֆանտոնը ընդհանրապէս սովորականէն աւելի բաւ կը բռնուին: Ասոր պատճառը՝ Սատրգ վաշային Լոնտոնի սեղանաւորաց հետ ըրած բանակցութեան սպասուած յաջող արդիւնքը կը համարուի, որ փարիզի մէջ Ն. Վիսնոթեան ըրած նախադաւ կարգադրութեանց վերջնական կերպիւս կ'ընտելն կախաւ է:

Լաշէյ 13 մայիս.

Աշխույժ գէմ պատերազմը շարունակելու համար մեծ պատրաստութիւնը կը լինայ: սակայն հասարակաց կարծիքը պատուաւոր պայմաններով Աշխույժ հաշտութիւն մ'ընդունել տալու բաւական տրամադիր կերեւի:

Փարիզ 13 մայիս.

Պ. Քլեմէ վերստին ազգային ժողովը նախագահ ընտրուեցաւ՝ առանց ձախակողմեաններուն մասնակցութեան:

Կառավարութիւնը՝ վիճաբանելի խնդրոց կարգին մէջ ընտրողական օրէնք նախադասելու առաջարկութիւն պիտի ընէ՝ հրամարելու կամ ընդունել տալու պայմանաւ: Աշխույժեան կերպիւս և չափաւոր աշխույժեանը պիտի պաշտպանեն կառավարութիւնը:

Վիլիսի 13 մայիս.

Սերվիլի մէջ մեծ ջրհեղեղներ եղած են:

Երեսփոխանաց ժողովին մէջ նախարարութեան նախագահը կառավարութեան եղած հարցման պատասխանելով ըսաւ թէ փարիզի ֆանտոնը մէջ հըրատարակուած Պ. Պայսիի նամակը վաւերական է, բայց Գալլիոյ հետ դաշնակցութիւն չ'ենալու հետեւ իսկ 1869 թ. անցքերուն վերաբերեալ պարբերութիւնն երկու տարեկանաց մէջ փոխանակուած խոստում մը կ'անհաղի, այն է՝ առանց կանխաւ իրարու հետ խորհրդակցելու՝ ուրիշ տէրութեան մը հետ չ'ընդհանցիլ:

Այս բացատրութիւնը հաւանութիւն գտաւ ժողովին:

Դեկտեմբեր 14 մայիս.

Նոր Օրէնսէն լուր կուտան թէ Կուսթիմուէյի Սան-Ջօզէ բերդին հըրատանաւորը՝ տեղւոյն անդ զիսկան փոխհրապարտը խորհրդանով ձաղկել տուր է իր զինուորաց: Հրամանատարը բանտարկեցաւ:

Երկրի իշխանութիւններն անդ զիսկ նաւապետ մը բանտարկելով Սանթիակո անդ զիսկան հրապարտան անոր ազատութիւնն և միանգամայն դրամական հատուցում պահանջեց:

Փարիզ 14 մայիս.

Զախակողմեանը ազգային ժողովը լուծման առաջարկութիւն ներկայացուցին:

Վաղը ծերակուտի ժողովը մը հաստատութեան ծրագրի պիտի ներկայացնայ ժողովին Երեսփոխանի ժողովը Մեծ ժողով պիտի կոչուի և 250 անդամ պիտի ունենայ, որոց 100ը կառավարութիւնը պիտի ընտրէ: 150ն ալ տէրութեան ամենէն շատ տուրք վճարող անձանց մէջէն պիտի ընտրուին:

Մեծ ժողովը պիտի կրնայ որոշել ներկայ կառավարութեան տեղութիւնը և ազգային ժողովը գումարելով հանրապետութեան նախագահ մ'ընտրել տալ: Ասիկէ զատ ազգային ժողովը պիտի կրնայ լուծել:

Սահմանադրական օրինաց վրայ ժողովը մեծագոյն մասին և կառավարութեան մէջ համաձայնութիւնը միշտ զըժուարին կ'արին:

Պ. Տը Պրօլի՝ պաշտօնի վրայ մնալն երկարացել է:

Դեկտեմբեր 13 մայիս.

Ռաբ. Բոնա. 49 7/16
Կոն. 4865
» 4869 58
» 4871 67 1/4
» 4872 86 1/2
Անգլ. Բոնա. 93 7/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ, Պէրութի մարտական տնօրէն Հաֆիզ Հալի Էֆէնդին Կ. Պօլսոյ ծխախոտի Բէժիկն տնօրէն անուանեցաւ:

Վսեմ: Աբրահամ պէյ Երամեան երէկ՝ Վեհ. Սուլթանին ներկայանալով հրաժեշտ մատուցանելէ ետեւ՝ Երազական Մար շողենաւով Ալէքսանդրիա գնաց Բարձր. Խորհրդ տեսնելու: Կըսուի թէ 15 օրէն Կ. Պօլսոյ պի վերադառնայ:

Սերվիլ Միլան իշխանին այսօր Վեհ. Սուլթանին պիտի ներկայանայ հրաժեշտ մատուցանելու, և իրիկունս դէմ պիտի մեկնի մայրաքաղաքէն:

Փոքր Ասիոյ սովեալ ժողովրդոց օգնութեան համար թէ՛ պաշտօնական և թէ՛ մասնաւոր հանգանակութիւնները կը շարունակեն:

Կայսերական պալատին պաշտօնեայներն ալ հանգանակութիւն մը բանալով՝ արդէն քանի մը հազար լիրա հաւաքած են:

Պատիւէն լրագրին բացած հանգանակութիւնն ալ 117000 զրշի հասած է, որով 30000 օրայ պիւր և 102 քիլոէրկի պաշտպաններն զնուելով չորեքշաբթի օրը Ալիզիէի շողենաւով ինէպօլի զրկուեցան:

Ինիլիւրիէն գրուած նամակ մը կը ծանուցանէ թէ քաղաքին փողոցներուն մէջ օրը չորս հիւզ հոգի կը մեռնին անօթութենէ, ընդհանրապէս ճաճիկ, և կը գանգատի իրաւունք թէ տեղւոյն միւլեանդ բնակիչները՝ կրօնական խորհրդութեամբ՝ իւրաքանչիւր իր կրօնակցին օգնութիւն կընեն, իսկ օգնող կրօնակցի չունեցող գ. ժաղդներն անօթի կը մեռնին: Սոսկալի՝ վիճակ:

Կըսուի թէ կայսերական հրամանադիր մը քանի մը ոճիւրներու համար պատժական օրինաց մէջ սահմանուած մշտնջենաւոր չլրացուող աշխատութեան պատիժը 15 տարիի վերածեր է:

Այս շաբթու Միւլիւրիլիթ անուանով տանակալու հայ լրագիր մը հըրատարակել սկսաւ Ժօրժ Տէրատէրօֆ Էֆէնդինի խմբագրութեամբ, առ այժմ՝ շաբթու երեք անգամ երեկու պայմանաւ:

Տարեկան գինն է Պօլսոյ համար 6 մէճիտիէ, Գրասենեակին է Ղալաթիա Սէլանիկ խանը թիւ 23:

Օրագրոյ հինգշաբթի աւուր թըւոյն մէջ մեզի դէմ հրատարակուած սրիկայական լրենի յօդուածին գըրով պատասխան տալու պիշնիլը մեր պատուոյն չենք ձգեր:

Այնպիսի ամենապատ սրիկայի մը հայհոյութեանց միակ արժանաւոր պատասխանին՝ իւր անամօթ երեսին տպաւի մ'է:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍՅԱՄԵՐ ՈՍՄԱՆԻՅԷ

3 մայիս.	ուրաթ իրիկուն	54.15
4 »	շաբթու առաւօտ	55.
	բացուեցաւ	55.30
	կէս օր	
Սալիթի Ժէնէրայի բաժնիք Սնդ. իր. 8, 2		
« ֆոխանակութեան »		5 6
Կ. Պօլսոյ Պաշտպան »		5.46
Քրէտի Ժէնէրայ »		41.40
Քրէտի Օսթրո-Թուրք »		
Երկրորդ Ժէնէրայ հին »	Ֆր.	418 50
	նոր	92
Փոխ. 4863	»	350
» 4865	»	350
» 4869	»	290

» 1872	» » 8650
Փոխ. 1873	» » 6.60
Թրաւուէյ	Օսթ. իր
ԸՆԹԱՏՔ ԿՐԱՄՈՅ	3 ՄԱՅԻՍ
Անգլ. Բոնա	զարուէ 409.30
Կ. Պ. Բոնա	» 87.25
Կ. Պ. Բոնա	» 89.20
Գ. Պ. Բոնա	» 51.20
Հինգ. Բոնա	»
Հինգ. Բոնա	» 404.25
Պիլիս	» 424

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Նորընտիր Ս. Պատրիարքին հաստատութեան մասին դեռ պաշտօնական լուր չ'կայ Բ. Դանէն:

Ազգայնոց ուշադրութիւնը կը հրաւիրենք հետեւեալ վիճակագրական տեղեկութեան վրայ, որ այս տարի Բեդրասիւրկ տպուած Ռուսերէն Սուլթանին անուն ճոխ օրացոյցին մէջ հրատարակուած է էջ 33: «Երեք տարուան մէջ ուղղափառութեան հետ միացան, այսինքն Ռուսացան»:

	1869	1870	1871
Կաթիլի	3332	2893	2645
Հայ	14	12	1534
Բողոքական	838	969	840
Ռուս Ռաւոնիէ	1772	1658	1640
Հրեայ	486	489	544
Մահմետական	8243	4900	1655
Հիւսիսային	3026	2762	2793
Համագումար	17731	13683	11561

Տիւրիսի Մեղու և Մշակ լրագիրներէն՝ մանաւանդ Ս. Լ. Միլանայ Արարատ տնադրէն կրփաւաքէնք հասկնալ թէ արդեօք չ'ընդէն այս ցանկին մէջի հաւատալիս եղած Հայոց թիւերը թէ արդեօք իրաւ է որ 1871ին 1534 Հայազգիք Ռուսաց դաւանանքն ընդունեն են. թէ այդ կըրօնափոխութիւնները Ռուսաստանի ո՞ր կողմը կամ ո՞ր վիճակներուն մէջ եղած են աւելի, և այն ալ ինչ կըրպով, բռնի թէ կամաւորապէս, թէ ինչ պատճառներէ ստիպուեր են, կրօնական համոզումէ՞ թէ արտաքին ներստիւրութենէ. արդեօք Պաշտօնականաց մեքենայութիւններով թէ Հաւատալիս անհեղինակութեամբ լուծեամբ կամ անխոհեմութեամբ և վերջապէս թէ ինչո՞ւ համար Հայոց կրօնափոխութիւնն 1871 ին տարօրինակ կերպով աւելցած է, մինչդեռ ուրիշ ազգաց կրօնափոխութիւնը նուազած է:

Կ'սպասենք որ վերջիշեալ ազգային թիւերը՝ մանաւանդ Արարատ ամառը իրն՝ այս ծանրակշիւ կէտերուն վրայ մանրամասն ստուգ տեղեկութիւններ տան, որպէս զի Ռուսիոյ մէջ Հայութեան վիճակը կարենանք ճշգրտ իմանալ:

Ազգ. Հիւանդանոցի Պատուարժան հոգաբարձութիւնն հետեւեալ հրաւիրագիրը զրկած է մեզ և այլոց:

Տիւր. Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն պատիւ ունի հրաւիրել զՁեզ որ հաճիք մասնակից դուսնուիլ Ս. Փրիկեան վարժարանի ուսանողաց ընտրութեանը, որ տեղի պիտի ունենայ 1874 մայիս 3 ժամը 4ին: Հոգաբարձութիւնն ինչ ինչ նըկատումս հարկ և պատշաճ դատեց որ սոյն կիւրակէ օրը կատարուի վարժարանի մէջ աւանդուած ուսմանց ամենուն ընդհանուր քննութիւնը միով և եթ նուազաւ:

Ուստի կ'փափաքի Հոգաբարձութիւնն որ Ձեր Մեծապատուութիւնը չ'ըլլանայ իւր ներկայութիւնը համայն Ազգին արդարահաւանաց և ուշադրութեան արժանի Ս. Վանքի մը մէջ թէ՛ ի քաջալերութիւն Հոգաբարձութեան և թէ՛ ուսանողաց:

